



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17214

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

1873-1874 ԱՄԻ

Ա. Բ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

ՈՒՋԱԿՆ ԶԱՐԾԻՆ ԳԼՈՒԻ ԵՆՐԻՑ ՓԱՇՏԱ ԽԱՆ ՎԵՐԻ ՈՍԿ ԹԻՒ 43

1876

369

Ա-23

369
Ա-23

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏՍՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՆՔԻՆԱԿԱՆ ԳԱՐԶՈՒԹԵԱՆ
1873-1874 ԱՄԵ

Ա. Բ.

Ա. Ա. Ա. ՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՒՆ ԺՈՂՈՎՈՅ



Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ն Ո Ւ Պ Ո Ղ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ս . Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն

ՈՒՋՈՒՆ ՉԱՐԵՒԻ ՎԻՈՒԻ ՇԷՐԻՑ ՓԱՇԱ ԽԱՆ ՎԵՐԻ ՆԱԿ ԲԻՆ 13

1876

896-84

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏՍՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ՐԿԿՊՎՈՎՈՇԱԿԱՄԱՆ

ՎԱՐՉՈՒՄ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Ա. Բ.

ՎԱՐՉՈՒՄ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՐՉՈՒՄ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՐՉՈՒՄ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ն Ո Ւ Պ Ո Ղ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ս . Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն

ՈՒՋՈՒՆ ՉԱՐԵՒԻ ՎԻՈՒԻ ՇԷՐԻՑ ՓԱՇԱ ԽԱՆ ՎԵՐԻ ՆԱԿ ԲԻՆ 13

2010

ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

- | | | | |
|-----|-----------------------|---------------|-------------------------------|
| 1. | Տ. Թաղէոս Եպիսկոպոս | Վախճանեաց | |
| 2. | Տ. Գրիգոր » | Ճանապարհորդ | |
| 3. | Տ. Նիկողայոս » | Սիրանեան | Վախճանեաց |
| 4. | Տ. Գարեգին Վարդապետ | Թարարեան | |
| 5. | Տ. Խորէն » | Մխիթարեան | Պ. Փ. Ս. Երուսաղէմի Հրաժարեաց |
| 6. | Տ. Մատթէոս » | Իզմիրլեան | |
| 7. | Տ. Հնայեակ » | Դիմաքսեան | |
| 8. | Տ. Յովնանեկէս Բահանայ | Մկրեան | |
| 9. | Տ. Գէորգ » | Սրճրուեի | |
| 10. | Տ. Խաչատուր » | Տ. Գարրիէլեան | |
| 11. | Տ. Յարութիւն » | Սերոփեան | |
| 12. | Տ. Յարութիւն » | Պարստու | Հրաժարեաց |
| 13. | Տ. Խորէն » | Փէնիսիանեան | |
| 14. | Տ. Սահակ » | Տ. Սարգսեան | |

ԱՆԴԱՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

- | | | | | |
|-----|--------------|-----------|---------|-----------|
| 1. | Սարսեան | Ստեփան | Փաշա | Հրաժարեաց |
| 2. | Մարտունեան | Սիւսե | Պէյ | |
| 3. | Տառեան | Սուրբ | Սիւսե » | Հրաժարեաց |
| 4. | Սրգունեան | Ստեփան | ԻՖէնտի | |
| 5. | Քախանաճեան | Յարութիւն | » | |
| 6. | Մանուկեան | Մանուկ | » | Հրաժարեաց |
| 7. | Խանտանեան | Յակոբ | Պէյ | Հրաժարեաց |
| 8. | Նորատունկեան | Սիւսե | ԻՖէնտի | |
| 9. | Սրապեան | Սարգիս | » | |
| 10. | Ժանակոչեան | Պօղոս | » | Հրաժարեաց |
| 11. | Միքայէլեան | Սիւսե | » | |
| 12. | Իկիտպաշեան | Սասարայ | » | |
| 13. | Մանիկոնեան | Միքայէլ | » | |
| 14. | Խնդիրեան | Ստեփան | » | |

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՌՆ ԵՈՂՈՎՈՅ

ԱՆԴՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

1873-74 ԱՄՅ

Ա. Բ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ.Ն

Նախորդ Քաղաքական ժողովը՝ որ 1872 էն մինչև 1874 ապրիլ 30 պաշտօն պիտի վարէր, առանց սահմանադրական երկամեայ շրջանը լրացնելու հրաժարեցաւ 3 օգոստոս 1873, և ներկայ Քաղաքական ժողովը ընտրուեցաւ. ուստի և Խառն ժողովոյ նոյն շրջանի համարատուութիւնն ալ երկուքի բաժնուեցաւ:

1872-1874 ամի կրօն. ժողովը նախորդ Քաղ. ժողովոյ հետ մինչև 1873 օգոստոս 3՝ խառն նիստերու պաշտօնավարութեան համարատուութիւնն արդէն կատարած և մատուցած է Ազգային ժողովոյ:

Եւ արդ կը փութայ՝ ինչպէս խոստացած էր իր առանձին համարատուութեան մէջ, ներկայ Քաղաքական ժողովոյ հետ եօթնամեայ խառն նիստերու պաշտօնավարութեան համարատուութիւնն ալ մատուցանել Ազգային ժողովոյ, որ 1873 նոյեմբեր 27 էն սկսեալ կը յանգի մինչև 28 յունիս 1874, Կրօնական ժողովոյ դադարման թուականը, թէ և սահմանադրական տարեգրութիւնը 1874 ապրիլ 30 էր, բայց մինչև իւր յաջորդին ընտրութիւնը, այսինքն մինչև 28 յունիս 1874 պարտաւորեցաւ իւր պաշտօնը շարունակել:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԻԱՐԷԱԿԱՆ ՏԵՂԱՊՈՆԱՅ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐԷԻ

1⁰ Ընտրութիւն Գեր. Տ. Նիկողայոս Սբբազանի ՚ի Պատրիարքական Տեղապահութիւն,

Կրօնական ժողովը նորընտիք Քաղաքական ժողովոյ հետ Խառն ժողովոյ առաջին նիստն ըրաւ ՚ի 27 նոյեմբեր 1873. և որովհետև թափուր մնացած էր Պատրիարքական աթոռը, ըստ հրամանի Բ. Դրան և ըստ որոշման Ազգային ժողովոյդ առաջին անգամ Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Պատրիարքական տեղապահ ընտրեց զԻերապատիւ Տ. Նիկողայոս Արքեպիսկոպոս, Աղտսեան և նորա հաստատութիւնը խնդրեց Բ. Դրնէն, և 1873 դեկտեմբեր 7 ին նորընտիք Ս. Տեղապահին հաստատութեան պաշտօնադիրը (պուրութիւն) ստացաւ, որոյ պատճէնն է հետեւեալը:

Էրմէնի Պաթրիդ Գայիմագամը
Նիկողոս Էֆէնտի

Էրմէնի Պաթրիյի պուլունան Մկրտիչ

73064 անկ

էֆէնտինին պու քերրէ վուգու պուլան
 իսթիֆար նեղար Ապիտէ գապուլ պույ-
 րիլարագ . եերինէ տիկէրինին ինթիխապը
 իճրա օլունմագ իւզրէ մէճիտի մուխթէ-
 լիթին մաղպաթայի միւթէգատտիմէսինտէ
 իսթիտա օլունարըը վէճհիլէ Չաթը Տօս-
 թանէլէրինին Պաթրիգ Գայմագամըլընա
 մէմուրիլէթի խուսուսընա պիլ իսթիլան
 իրատէի սէնիլէի Հաղրէթի Փատիլաճի
 միւթէպլիգ վէ շերէֆուտուր պույրուլ-
 մուշ օլմաղլէ մուգթէղայի տիրայէթ վէ
 րէվլիլէթլէրի իւզրէ Պաթրիգի ճէտիտին
 ինթիխապ վէ նասպընա գատար վէտիլէի
 տէսթը էհիլիլէթլէրի օլան էրմէնի միլլէթի
 մէսալիհինին հիւսնը լույլէթ վէ թէսվիլէ-
 սինէ վէ իպրագը աթար մէհամշինասի վէ
 սատաղաթ քեարլիլէ հիւսնէթ իլլիլէ տէյու-
 Յիլ 1290 շէվլալ 26 վէ 1289 քեա-
 նուսի էվիլէ 4 :

Թարգմանութիւն

Ա. Պատրիարքական Տեղապահ Հայոց
Տէր Նիկողայոս Արքազան

Հայոց Պատրիարք Մկրտիչ Արքազա-
 նին տուած հրատարականը բարձրագոյն
 հրամանաւ ընդունուած ըլլալով, նորա
 տեղը աւրիշ մը ընտրուելու համար ինչ-
 պէս խնդրած է խառն ժողովն իւր մա-
 տուցած գրութեամբը, Չեր Արքազնու-
 թիւնը Պատրիարքական տեղապահ կար-
 գուելու մասին Օգոստոսիաու կայսեր բար-
 ձրը հաւանութիւնն ու հրամանն առնուած
 է :

Հետեւարար կը յանձնարարուի որ
 մինչև ջընտրութիւն Պատրիարքին, Հայ-
 ոց աղբին գործերը, որ Չեր Արքազնու-
 թեան ձեռքը յանձնուած է, Չեր խնու-

տութեամբը բարուք տնօրինելու և գոր-
 ծունէութեան ու հաւատարմութեան նը-
 շաններ ցոյց տալու շանաղիը գանուիք :

2. Բնտրութիւն Վեր. Տ. Ներսէս Արքազանի
'ի Պատրիարքական Տեղապահութիւն

Պատրիարքական տեղապահ Վեր. Տ.
 Նիկողայոս Արքեպիսկոպոս յետ սակաւ-
 օրեայ հիւանդութեան 1874 փետրվար
 10 ին վախճանելով, խառն ժողովս Բ.
 Դրան հրամանին համեմատ ըստ Սահմա-
 նադրութեան Պատրիարքական նոր տեղա-
 պահ ընտրեց Նիկամիդիոյ վիճակին Ա.
 Աաշնորգ Գեր. Տ. Ներսէս Ս. Արքեպիս-
 կոպոս Վարժապետեան և անոր հաստա-
 տութիւնը խնդրեց Բ, Դոնէն 13 փետր-
 ուար 1874 : Նորընտիր Արքազան Տեղա-
 պահին հաստատութեան պաշտօնագիրն
 ստացաւ, որ միանգամայն ընդ փոյթ
 Պատրիարքի ընտրութիւն ընել կը պատ-
 ուիրէր, որոյ պատճէնն է հետեւեալը :

Էրմէնի Պաթրիգ Գայիմագամը
Տիրայէթլու Ներսէս էֆէնտիլէ

Տիրայէթլու էֆէնտի .

Պաթրիգ Գայիմագամը Նիկողոս է-
 ֆէնտինին վէֆաթը ճիհէթի իլէ Գայմա-
 գամըղը մէղքիւրէ Չաթը Տօսթանէլէրի-
 նին ինթիխապ օլունարըլընա տայիը մէճ-
 լիտի մուխթէլիթին պիլը գըթա մաղպա-
 թառը ախզ վէ միւթալէա գըլլընարագ .
 իշպու ինթիխապ քէք միւսասիպ վէ եօլըն
 տա կէօրիւնմիւշ օլմաղլէ, մէվտու էօհ-
 տէի տիրայէթ վէ քիֆայէթլէրի օլան
 մէսալիհը միլլէթին հիւսնի լույլէթ վէ
 թէմշիլէթի իլէ պէրապէր. պաթրիգ ին-
 թիխապը խուսուսընտա տախի պիլը ան
 էվիլէ իղթիլոյի հալին իճրա ու ինհա-

սընա սարֆը մէսայի վէ մագտիրէթ իյ-
 լէմէլէրի սիագընտա թէղքէրէի մախսուսէ
 թէրգիմ գըլլընար :

Յիլ 1294 մուհարրէմ 11

վէ Յիլ 1289 շուպաթ 16

Քլէմա Բաշխ

Թարգմանութիւն

Ա. Պատրիարքական Տեղապահ Հայոց
Խանկազար Տէր Ներսէս Արքազան

Խոհեմաղարդ Տէր

Պատրիարքական տեղապահ Նիկողոս
 Արքազանի վախճանմանը պատճառաւ
 Չեր Արքազնութիւնը նոյն տեղապահու-
 թեան պաշտօնին ընտրուած ըլլալուն նը-
 կատմամբ խառն ժողովոյ գրութիւնն ըս-
 տացանք և վերահասու եղանք :

Սոյն ընտրութիւնը խիստ յարմար և
 օրինաւոր տեսնուելով, ներկայիս կը
 յանձնարարեմք որ Չեր խոհեմութեանն
 ու ձեռնհասութեանը յանձնուած Ազգին
 գործերը բարուք տնօրինելով հանդերձ,
 Պատրիարքական ընտրութեան մասին
 պարտ ու պատշաճը շուտով գործադրե-
 լու և յայտադրելու շանաղիը գանուիք :

3. Պատրիարքական Բնտրութիւն

Պատրիարքական ընտրութիւնը փու-
 թացնելու մասին Բ. Դրան սոյն հրամա-
 նին վրայ խառն ժողովս Ազգային ժողո-
 վոյը վերստին բացման հրամանն ստանա-
 լով Բ. Դոնէն, Պատրիարքական ընտրու-
 թեան խնդիրը մատոյց Ազգային ժողո-
 վոյը, Սահմանագրութեան համաձայն Կ.
 րեպիտիանական ընդհանուր հաւանու-
 թեամբ Կ. Պօլսոյ Պատրիարք ընտրուեցաւ
 Պատրիարքական Տեղապահ Ամենապատիւ
 Տ. Ներսէս Արքազան Արքեպիսկոպոս

Վարժապետեան, որոյ ընտրութեան հան-
 րագրին հետ Ազգային ժողովոյը կա-
 տարած Սահմանագրութեան ինչ ինչ փո-
 փոխութեանց վաւերացումը խնդրուեցաւ
 Բ. Դոնէն ըստ սրտման Ազգային ժողո-
 վոյը, որոյ վաւերացման Պաշտօնագիրն
 ընթերցաւ յատենի Ժողովոյը. (Տես յԱ-
 տենագրութեան Ազգային ժողովոյ, բա-
 ցումին 1874 ամին և նիստ Ա.) :

Գ.

ԹԱՐԱՆՅՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՎԵՃ . ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կրօնական և Քաղաքական Խառն
 ժողովս Ամենապատիւ Տ. Ներսէս Արքա-
 զան Պատրիարքի ընտրութեան առթիւ
 հետեւեալ գիրը զրկեց առ Վեհափառ
 կաթողիկոսն Ամենայն Հայոց :

Առ Գերեջանիկ Տ. Տ. Գէորգ Գ.
 կաթողիկոս Ամենայն Հայոց և Մայրազոյն
 Պատրիարք Արարատեան Մայր աթոռոյ
 Ս. Էջմիածնի 'ի Վաղարշապատ .

Վեհափառ և Աստուածընտիր
Ս. Հայրապետ .

Հողեղուարճ բերկրութեամբ և որ-
 դիական քաղցր պարասուրութեամբ փու-
 թամբ ծանուցանել Չերումի Աստուա-
 ծարեալ Վեհափառութեան, զի Երեսփո-
 խանական ընդհանուր ժողովս մեր՝ հա-
 րազատ որդիք Արքազնութեան Չերոյ և
 Մայր Աթոռոյ Հայաստանեայց, 'ի 26
 ապրիլի տարույս միաձայն հաւանութեամբ
 ընտրեցին 'ի Պատրիարքութիւն Կ. Պօլսոյ
 զԱմենապատիւ Տէր Ներսէս Տեղապահ Ս.
 Արքեպիսկոպոսն Վարժապետեան, ըստ
 կանոնաց Ազգային Սահմանագրութեան :

ի 64 քուէարկուաց 60 քուէս ընձեռեալ նմա: Ապա ՚ի 25 Մայիսի Ս. Պատրիարքն հրաւիրեցաւ ներկայանալ առաջի բարեխնամ կայսեր Օսմանեան Սուլթան Ապաիւլ Ազիզ խանի, յորմէ պատուեցաւ առաւել քան զոր ցարդ սովորականն էր, որպէս նաև դնացեալ առ ամենայն բարձրաստիճան Նախարարս Տէրութեան մեծարանօք ընդունեցաւ և ՚ի նոցունց դովեստիւք հուշակեալ:

Այս երջանիկ ամենաբարձակ ընտրութիւն և ընդունելութիւն Նորին Սըրբութեան ուրախացոյց զժողովուրդ մեր համայն, և ՚ի մասնաւորի զՅառն ժողովս Ազգային Վարչութեան, որպէս և իրաւունս ունիմք հաւատալ թէ՛ և Վեհափառութիւն ձեր խնդամիտ սիրով լուաւ զայն, զի առ պահ մի երկպառակ կարծեալ Երեսփոխանական ժողովս յանձն Տեառն Ներսէսի յօգիւ համաձայնութեան միացաւ, և այսու յոյս մեր առաւելու ՚ի մեզ, զի հաճոյական աղօթիւք Վեհափառութեան Ձերոյ հաստարմատ անկեացի սէր և խաղաղութիւն և շնորհիւն Աստուծոյ և քաղցր հովանաւորութեամբ Ձերով արժանընտիր Պատրիարք մեր ջան ՚ի գործ զիցէ բարեզարդութիւն սեկեղեցւոյ և վարժարանաց և համայն ազգային գործառնութեանց:

Հայցելով վերստին զսուրբ օրհնութիւնս Ձեր և զբարեխնամ Հովանաւորութիւն ՚ի վերայ ամենեցուն մեր:

Մնամք

Աստուածարեալ Վեհափառութեան Ձերում Ամենախնարհ ծառայք և որդիք

Ատենապետ Կրօնական Ժողովոյ
ՔԱՆԱՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ

Ատենապետ Կրօնական Ժողովոյ

ՄԱՏԹԷՍ ՎԱՐՊԱՅՆ ԻՅՄԻՆԱՆ

Ատենապետ Քաղաքական Ժողովոյ

ՄԻՐՅՈՆ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Ատենապետ Քաղաքական Ժողովոյ

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՄԻԿՈՅԵԱՆ

ի և Յունիսի 1874 և ՚ի մեր թուին ՌՅԻԳ. Մարերի ԻԴ.

ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս

ի Պատասխանի յիշեալ գրութեան Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց բարեհաճեցաւ հեռեկալ օրհնառաք կոնդակը յղէլ առ Խառն ժողով Կեդրոնական Վարչութեան:

ԳԻՌԻԳ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սըրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Աստուածասէր և ազգասէր անդամոց Խառն ժողովոյ Ազգային Վարչութեան Կ. Պօլսոյ՝ սիրելեաց և հարազատ որդւոց Մայր Աթոռոյս և մեր

Ողջոյն Քրիստոսաւանդ և օրհնութիւն Հայրապետական:

Ձգրութիւն Ձեր՝ որ ՚ի և Յունիսի տարւոյս ընդ համարաւ 468 ՚ի մասին համաձայն ընտրութեան սիրելոյ մեր Գերապատիւ Ներսէս Արքեպիսկոպոսի Վարժապետեան ՚ի Պատրիարքութիւն Հայոց Կ. Պօլսոյ՝ ոչ սակաւ բերկրութեամբ ընկալաք և փառս տուաք Արարչին, զի շնորհեաց սիրեցեալ և հարազատ որդւոց մերոց որ ՚ի Տաճկաստան՝ զարի և զժրջան հովիւ, որ արդարև ըստ Տեառն բա-

նին գուն գործեսցէ զանձն իւր դնել ՚ի վերայ ոչխարաց, զոր արդեամբ ցուցանել և բանիւք փրկարար քարոզութեան ՚ի նոյն յարատևել ապաքէն, որպէս յուսամք որ ոչ ևրբէք անփոյթ լինիցի նա, այլ մահաւանդ ըստ վատահութեան Երեսփոխանական Ընդհ. ժողովոյ և Ձեր և ակնկալութեան մերում, ըստ ամենայնի արժանաւոր զանձն կացուացէ այնմ մեծի և դժուարակիր պաշտաման:

Լիայոյս եմք զի յայսմհետէ բարձրին բողոքովին ՚ի միջոյ աղքակործան տարաձայնութիւնքն, յորս մերթ ընդ մերթ ըմբռնեալ դիւրագայթ սահեցմամբ սիրեցեալ որդիք մեր, ամենայն ազգաշահ ձեռնարկք և գործառնութիւնք գտանէին զցաւալի խափանումն յուրախութիւն թրշնամեաց կրօնիս մերոյ և յառաջադիմութեան, և հաստարմատ անկեացի սէրն այն և խաղաղութիւն, որ յաջէ զամենայն և յապահովի կացուցանէ զբարոյական և զմտաւորական զարդացումն ամենայն ազգաց առ հասարակ:

Մեք որ յաւէտ նախանձախնդիք եմք փառաց և պայծառութեան սիրեցեալ Ազգիս և Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ, ապաքէն ախորժելի է մեզ լսել հանապազ զառաքիկական և զաղգտչահ գործս հոգևոր որդւոց մերոց, Եպիսկոպոսաց ասեմք և վարդապետաց, առ որ խրախուսեալ զնոսա և յորդորել չխընայեմք ՚ի բանս համոզանաց, միայն ցանկալի է զի և ջերմեանդ ժողովրդականք ևս փոխանակ սիրոյ և վաստակոց պաշտօնէից իւրոց ՚ի պէտս կարևորս չը թողցէ առանց խնամոց և մխիթարութեան, և միաբան սիրով գործել միշտ և տնօրինել զօգուան Ազգիս ՚ի ձեռն օրինաւոր ժողովոց:

Աներկբայ կամիմք լինել, զի Դուք ըստ ամենայնի գործակից գտեալ նորընտիր Պատրիարքի ձերում, Ազգ մեր և Եկեղեցի ՚ի Տաճկաստան ընդ երկար վայելեցցէ զարդիւնս խաղաղասիրութեան և համամիտ գործառնութեանց, ուստի մխիթարեալ սրտիւ և հագուով օրհնեմք զսիրեցեալ և զհարազատ որդեակս մօրս լուսոյ Ս. Էջմիածնի և Խնդրեմք յամենառատ շնորհաց բարձրելոյն՝ յաջողել զամենայն օգտակար ձեռնարկս Ձեր ՚ի պայծառութիւն Ազգի և Եկեղեցւոյ:

Ողջ լերուք ՚ի խնամս բարձրելոյն ապահովեալ
Թիւ 296
ի 8 Յունիսի 1874 ամի
և յԱզգ. Թուակա.
նութեան ՌՅԻԳ.
ի Ս. Էջմիածին

Գ.
Շ Ր Զ Ա. Բ Ե Ր Ա. Կ Ա. Ն
ՌԻՂՂԵԱԼ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԿՈՒՍԱԿԱԼՍ
ԳԱՒԱՌԱՅ

Գաւտուաց կուսակախներուն հայրական խնամքը մեր գաւառացի ազգայնոց վրայ աւելի ևս տարածելին խնդրելու նպատակաւ Նախագահ Սրբազանը իւր Պատրիարքութեան ընտրութիւնը ծանուցանելու տուած չըջարեբական մը պատրաստել տուած էր ուղղեալ առ ամենայն Բարձր. Կուսակալս գաւառաց: Խառն ժողովս ըստ առաջարկութեան Նորին Բ. Սրբազանութեան այդ չըջարեբականին պատշաճաւոր ըլլալը ընդունեց և գործադրութիւնը որոշեց:

Ահաւասիկ նոյն չըջարեբականին պատճէնը:

Կեդրոնական վարչութեան Կրօնական և Գաղափարական Խառն ժողովը, գաւառաց համար արգէն հրատարակեալ Սահմանադրական Հրահանգին իբրև յաւելում ձեռնարկայ Հրահանգը վաւերացուց, և գործադրութեան դրաւ: Եւ երբ Կեդրոնական վարչութիւնը փորձառութեամբ ինչ ինչ փոփոխութեան հարկ տեսնէ, պիտի վերաքննուի սոյն Հրահանգը, և դարձեալ պիտի հրատարակուի. բայց մինչև այն ատեն՝ ներկայ հրահանգը՝ Սահմանադրական Հրահանգին հետ անվրէպ պիտի գործադրուի, և թէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը և թէ Կիլիկիոյ վիճակաց Առաջնորդը և Գաւառական վարչութիւնը պարտաւոր են այս երկու Հրահանգաց համաձայն վարուելու:

24 Ապրիլ 1874 ՆԱԽԱԳԱՀ
Ի Պատրիարքին Հայոց ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Կ. Պօլս ԳՅՐԻՐԳԿՆ. ՏԵՂԱՊԱՀ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ԴԻՄԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՅ
Ս. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ Ստեփանյան
ԹԱԿԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ԴԻՄԱՅ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՅ
Ստեփանյան Ստեփանյան
Ս. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

1. Կիլիկիոյ առաջնորդական վիճակներէն իւրաքանչիւրը կ'ընտրէ իւր Գաւառական Ընդհանուր ժողովը ըստ Սահմանադրական հրահանգի Կեդրոնական վարչութեան, և ընտրական գործողութեանց տեղեկագիրը կը ղրկէ առ Կեդրոնական վարչութիւնն, որ օրինաւորութիւնը ստուգելէն ետքը կը վաւերացնէ, և կը ծանուցանէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, որ իւր կոնդակաւ ծանուցանէ

վիճակին ժողովրդեան, և Կեդրոնական վարչութիւնն ալ իր վաւերացումը յատուկ նամակաւ կը ծանուցանէ Առաջնորդին և Գաւառական ժողովին: Սյուպէս կ'ըլլայ նաև վիճակի մը Կրօնական և Գաղափարական ժողովոց ընտրութեան վաւերացումը:

2. Գաւառական Կրօնական ժողովը կրօնական խնդրոց համար ՚ի հարկին նախ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կը դիմէ, և ապա ՚ի հարկին կը դիմէ Կեդրոնական վարչութեան Կրօնական ժողովոյ, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կարծիքն ալ ՚ի միասին ծանուցանելով:

3. Կիլիկիոյ առաջնորդական վիճակի մը Կրօնական ժողովը եթէ իւր վիճակին մէջ վարդապետ ձեռնադրել տալու հարկ տեսնէ, կը դիմէ խնդրագրով մը Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, և անոր հաւանութեամբը ձեռնադրել կուտայ: Իսկ եթէ վիճակի մը ժողովուրդը փափաքի իւր վարդապետ առաջնորդը եպիսկոպոս ձեռնադրել տալ, նախ պիտի դիմէ Կեդրոնական վարչութեան որ ընծայացունին արժանաւորութիւնը տեսնելէ ետքը, իր հաւանութիւնը կուտայ:

4. Կիլիկիոյ վիճակին գաւառական անտուկներուն ելքն են նաև Սոյ աթոռոյն սահմանուած տուրքը, պաղի ևն, զորըս ըստ սոյնորութեան անխափան հատուցանելու պարտաւոր են: Եւ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը նաև իբր վանահայր Սըսոյ վանուց պարտաւոր է հոգ տանիլ նոյն վանուց պայծառութեանը, անոր մէջ հաստատելով դիշերթիկ վարժարան ժառանգաւորայ՝ Կիլիկիոյ վիճակէն ժողովելով յարմար տղաքներ յուսումն և ՚ի կրթութիւն, և սրոշեալ ժամանակներ համար

տալ Կեդրոնական վարչութեան, վարուելով ըստ Հրահանգի աղգային վանօրէից, որ վաւերացեալ է Կեդրոնական վարչութեան:

5. Առաջնորդի ընտրութեան ատեն Կեդրոնական վարչութիւնը Ազգին մէջ գտնուած բոլոր անպաշտօն և առաջնորդական արժանիք ունեցող եկեղեցակաւ նաց ընդհանուր ցուցակը կը հաղորդէ նախ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, և անոր օրինաւոր դիտողութիւնը լսելէ յետոյ՝ ըստ այնմ նոյն ցուցակը կը հաղորդէ ընտրող գաւառին:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը կ'ընայ նոյն ցանկին մէջէն գաւառին համար ամենէն աւելի յարմարաւոր երեք անձինք ցուցնել Գաւառական Կրօնական և Գաղափարական ժողովոց, բայց Գաւառական Ընդհանուր ժողովը ազատ է Կեդրոնական վարչութեան ընդհանուր ցուցակին մէջէն ալ ընտրելու:

6. Առաջնորդի ընտրութեան տեղեկագիրը կուղարկի առ Ս. Պատրիարքն Կ. Պօլսոյ, և Կեդրոնական վարչութեան Խառն ժողովը սոյն ընտրութեան օրինաւորութիւնը քննելէ և ստուգելէ ետև կը հաստատէ զառաջնորդը, և Բ. Դրան իմաց կուտայ պաշտօնական հրամանագիրն ըստանալու համար, և Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին ալ իմաց կուտայ որ իր կոնդակաւ վիճակին ժողովրդոց ծանուցանէ, Կեդրոնական վարչութիւնը յատուկ նամակաւ իր վաւերացումը կը ծանուցանէ Գաւառական Ընդհ. ժողովին, Առաջնորդական Տեղապահին ընտրութեան մէջ ալ այս եղանակաւ պիտի վարուելի:

7. Երբ առաջնորդի մը վրայ ամբաստանութիւն ծաղի, Կեդրոնական վարչութիւնը ընել Կիլիկիոյ առաջնորդական վի-

չութիւնը պիտի հաղորդէ նաև Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, Առաջնորդին և ամբաստանողաց մէջ իրաւախոհութիւն ընելու համար: Երբ իրաւախոհութիւնն անհնար լինի, և տեսուչ կամ քննիչ ղրկել հարկ ըլլայ, Կեդրոնական վարչութիւնը պիտի յանձնարարէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին որ ինք արժանաւոր անձինք ղրկէ նոյն պաշտօնները կատարելու ըստ Սահմանադրական Հրահանգին, և անոնց տեղեկագրին արդիւնքը ծանուցանէ Կեդրոնական վարչութեան, հանդերձ իւր դիտողութեամբը:

8. Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իբրև հոգևոր դէտ Կիլիկիոյ, իւր հոգևոր իշխանութեանը ներքև գտնուած առաջնորդական վիճակաց վրայ հսկելու պարտաւոր է, որ իւրաքանչիւր գաւառական վարչութիւն և առաջնորդ Սահմանադրութեան և Կեդրոնական վարչութեան սահմանեալ օրինաց և հրահանգաց համաձայն վարուին, և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը կատարեն:

Եթէ հակառակ ընթացքի մէջ գըտնուող ըլլայ, իրաւունք ունի աղգարարութիւն ընել և բացատրութիւն պահանջել: Երբ անուղղայ մնայ, կը ծանուցանէ Կեդրոնական վարչութեան, և անոր հրահանգին համեմատ կը վարուի:

Այս պարագային մէջ եթէ Կեդրոնական վարչութիւնը տեսուչ ղրկելու հարկ տեսնէ, ինք Կեդրոնական վարչութիւնը պիտի ղրկէ իւր կողմէն, Իսկ երբ աղգարարութիւնը փոխանակ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կողմէն ըլլալու, ըստ Սահմանադրական Հրահանգի Կեդրոնական վարչութիւնը հարկ տեսնէ աղգարարութիւն ընել Կիլիկիոյ առաջնորդական վի-

ճակի մը վարչութեանն և առաջնորդին, և ապա տեսուչ զրկել հարկ ըլլայ. Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին կը յանձնարարէ տեսուչ մը զրկել հան. և նոյն տեսչին տեղեկագրին հետ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իւր կարծիքն ալ կը հաղորդէ Կեդրոնական Վարչութեան, որ պարտաւարտած տնօրինութիւնը կրնէ, և կը ծանուցանէ թէ առաջնորդական վիճակին և թէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին:

2. Բնորոշ և վաւերացեալ Գաւառական Ժողովք

Սահմանադրական Հրահանգին համաձայն հետեւեալ առաջնորդական վիճակներն ընտրեցին իրենց Գաւառական Բնգհանուր Ժողովներն ու Գաւառական Վարչութիւնները զորս օրինաւոր գանձարկ վաւերացուց Խառն Ժողովս:

1. Բերիա
2. Բաշու
3. Չարսանճաղ
4. Սղերա
5. Բարերդ
6. Ճանիկ
7. Տիվրիկ
8. Ակն (Քաղաքական Ժողովը միայն)

Մնացեալ առաջնորդական վիճակներու սահմանադրական Ժողովներն ալ հետ ղհետէ ընտրուելու վրայ են:

2.

Ս.Ա.Ս.Ջ.Ն.ՈՐ.Բ, Վ.Ա.Ն.Ս.Հ.Ս.Ր.Բ,
ԵՊԵՍԿՈՊՈՍԿԱՆ ԸՆԾԱՅՈՒՆՈՒԹ,
ՆՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂ.Ս.ՊԱՋԲ
Կրօնական Ժողովոյ պատրաստած
առաջնորդական ընտրելեաց ընգհանուր
ցուցակը, շր նախորդ Քաղաքական Ժո-

ղովն ընգհանած էր, ներկայ Քաղ. Ժողովուն ալ ընգհանելով ըստ Սահմանադրութեան Գաւառական Բնգհանուր Ժողովն ընտրած՝ բայց տակաւին անհովիւ մնացեալ վիճակաց յարմար երեք եկեղեցականաց անուաները պարունակող մասնաւոր ցանկին հետ ընգհանուր ցանկին ալ զըրկուեցաւ, որպէս զի անկէ ալ ընտրելու աշտա ըլլան: Այս կերպով իրենց առաջնորդներն ընտրելին հետեւեալ վիճակները:

Ա. Տիվրիկի Գաւառական Բնգհանուր Ժողովը առաջնորդ ընտրեց Արժանապատիւ Տ. Թէոդորոս վարդապետ. զոր վաւերացուց Խառն Ժողովս, և Կիլիկիոյ թեմն ըլլալուն համար զրեց Կիլիկիոյ Կաթողիկոսին, որ հաստատութեան կոնգակը զրկէ:

Բ. Եւգոկիոյ Գաւառական Ժողովն առաջնորդ ընտրեց նոյն վիճակին նախկին առաջնորդ Արժանապատիւ Տ. Յակոբ վարդապետ ճգնաւորեան, զոր վաւերացուց Խառն Ժողովս:

Գ. Պալքքէսէրի Գաւառական Ժողովը առաջնորդ ընտրեց Արժանապատիւ Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան, զոր վաւերացուց Խառն Ժողովս:

Դ. Ակնայ Գաւառական Ժողովը առաջնորդ ընտրեց Տիգրանակերտի հըրաժարեալ առաջնորդ Գերապատիւ Յակոբ Եպիսկոպոսը, զոր վաւերացուց Խառն Ժողովս:

Ե. Վանօրէից խորհրդոյ մէկ տեղեկագրին վրայ Մշոյ Ս. Կարապետ վանքը վարագայ վանքէն բաժնուեցաւ, և Մշոյ Ս. Կարապետ վանուց միարանութիւնն զղերապատիւ Մամբրէ Եպիս-

կոպոս Վանահայր ընտրած և խնդրած ըլլալով վաւերացուց Խառն Ժողովս:

Զ. Կրօնական Ժողովը Պալքքէսէրի նորնախոր առաջնորդ Արժ. Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեանի Եպիսկոպոսական վկայական տալ արդէն որչաճ ըլլալով, նախագահ Սրբազան Հօր առաջարկութեան համեմատ Խառն Ժողովս ընծայացուին արժանաւորութիւնը տեսնելով ընգհանուր հաւանութեամբ ընգհանեց նորին Սրժանապատիւութեան Եպիսկոպոսական վկայական տրուելը:

Է. Խառն Ժողովոյս կողմանէ առաջնորդական տեղապահ և Սահմանադրութեան գործադիր տեսուչ անուանեցան:

1. Արժ. Յարութիւն վարդապետ Յովհաննէսեան Բուսճուքի համար, Գերձակեան Արժ. Գէորդ վարդապետի հրաժարման վրայ:

2. Արժ. Խորէն վարդապետ Շահնազարեան Մշոյ վիճակին համար, և միանգամայն գործադիր տեսուչ ինչպէս որոշած էր նախորդ Խառն Ժողովն, որ մինչև ցարդ անգործագրելի մնայած էր:

3. Արժ. Սուքիաս վարդապետ միարան Ս. Երուսաղէմի, Բարեւոնի համար:

և, Արժ. Կարապետ վարդապետ Փափագեան Եղեւնոյ համար, և միանգամայն գործադիր տեսուչ՝ Գեր. Յակոբ Եպիսկոպոսի հրաժարելուն վրայ:

3.

ԵՐԱՅԱՍՏԱՆԻ Ս. ՏԵՂԵՍՑ ԽՆԳԻՐԸ
Երուսաղիմայ Ս. Պատրիարքը Բեթղէճեմի Ս. Ծննդեան Եկեղեցոյ սինազարդ դաւթին Գրիգորի-Բեան իրաւունքնիս Յունաց կողմէն յափշտակուելու ջանքէն ծաղած վէճին վրայօք Վարչութեան

զիր մը զրկած էր, սրոյ մէջ խիստ մանրամասնաբար կը նկարագրէր Հայոցս իրաւունքները, անոնց վերաբերեալ պաշտօնական վաւերագիրը մէջ բերելով:

Միարանութեան կողմէն առ մեծ Եպարքոսն մատուցանելի տաճկերէն ճանձր մ'ալ եկած էր:

Խառն Ժողովս այս մեծ խնդիրը նրկատողութեան տեսնելով որչեց որ յեւեալ ճակէր Խառն Ժողովոյս կողմէն զըրուած ճաշ-ճաշով մը Բ. Գրան մատուցանէ նախագահ Սրբազանը:

Երուսաղիմայ Ս. Պատրիարքէն եկած մէկ հեռագրին վրայ Պօլսոյ և Երուսաղիմայ փոխանորդ հայրերը Արտաքին Գործոց Պաշտօնէին երթալով ցոյց արւեր են նոյն հեռագիրը, որ անմիջապէս տղղու հեռագիր մը քաշեց Երուսաղիմայ կառավարչին, և այս հեռագրին շնորհիւր Երուսաղէմէն բերկրութեամբ ծանուցին Ս. Ծննդեան օրերուն իրաւազութեամբ անցնիլը, և Բեթղէճեմի մէջ Հայոցս կատարած սովորական արարողութեանց ղէմ նոր արդելը մը չ'պատահիլը:

Արտաքին գործոց նախարարը ուրիշ հեռագիր մ'ալ քաշած է, Երուսաղիմայ կառավարչէն այս խնդրոյ վրայ տեղեկութիւն ուղելու մտօք:

Այս երկու հեռագրաց օրինակները Բ. Գրանէն առնուած և առննադրութեանց մէջ արձագրուած է:

Նախագահ Սրբազանին մատուցած մազպատճային պատասխան Բ. Գրուր գրով մը Պատրիարքարանիս որ, Երուսաղիմայ կառավարչը կը գրէ թէ երբէք Հայոց ազգին իրաւանցը բռնարա-

բութիւն եղած չէ հոն , և թէ անոնք ը-
բ-բեռնի գէմ նոր պահանջումներ կրնեն :

Ժողովս վերահասու ըլլալով որ սիւ-
նազարդ դաւթին Գլխեկեղութեան խնդի-
րը տակաւին լննցած չէ , Երուսաղեմայ
Գեր . փոխանորդին հետ խորհրդ-
դակցելէ ետև և այս մասին անոր ներ-
կայացուցած տաճկաց 1252 թուականաւ
է-է շէրին պատճէնը կարգալէ և տուած
կարծիքը ուշադրութեան առնելէ ետքը
որոշեց գրել Բ . Իրան , որ հոս Բ . Գու-
ռը մեր և յունաց ազգին կողմէն խառն
մասնաժողով մը կազմուի խնդրոյն քըն-
նութեան և վերջին որոշմանը համար :

Երուսաղէմի Ս . Տեղեաց ուրիշ խըն-
դիրները , որք շատ են և ժողովս աշխա-
տած է ատոնց համար . Քաղաքական ժո-
ղովոյ համարատուութեան մէջ կը տես-
նուի , վասնդի մէկ մասը Խառն ժողովոյ
մէջ , մէկ մեծ մասը Քաղ . ժողովին մէջ
խորհուած իրենց վիճակին մէջ կը մնան ,
և այդ խնդիրներն առհասարակ տակաւին
վախճան գտած չեն .

Ե .

ԶՄԻՒՆԻՈՅ ԱՌՋՆՈՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Նախորդ վարչութեան օրով Զմիւռ-
նիոյ սահմանադրական ժողովներն հաս-
տատուած և կեդրոնէն վաւերացած էր .
բայց կուսակցութիւն մը խռովութիւն
հանած և յաջողած էր Գաւառական ժո-
ղովը ցրուելու և վաբի Փաշային միջոցաւ
յանձնաժողով մը կազմելու : Գարձեալ
խաղաղութիւնը և սահմանադրական բա-
րեկարգութիւնը վերահաստատուելու հա-
մար Գեր . Եղեւսեան Սրբազան Զմիւռնիա
ղրկուած էր նախորդ Խառն ժողովոյ կող-
մէն հարկ եղած պաշտօնական գրերով :

Սակայն նոյն կուսակցութիւնը Ե-
ղեւսեան Սրբազանի ջանքը ապարդիւն
հանելու համար տեղւոյն կուսակալին մի-
ջոցաւ առաջարկած էր այդ յանձնաժո-
ղովին հետ գործելու : Նորին դերապատ-
ուութիւնը այս առաջարկութիւնը չընդու-
նելով Աղգային վարչութեան հրահանգ
խնդրած էր լուծեալ Գաւառ . ժողովոյն
տեղ նոր ժողով մը ընտրելու համար , որ-
մէ ետքը անմիջապէս Կ , Պօլիս պիտի վե-
րադառնար :

Այս խնդրանաց վրայ այն ինչ Խա-
ռըն ժողովս կը պատրաստուէր պէտք ե-
ղածը տնօրինել , իմացաւ որ Զմիւռնիոյ
կուսակալին Կ-իւն վրայ մեծ Եպարքոսն
ստիպանօք Տ . Նիկողոյոս Սրբազան Տե-
ղապահին հեռագրել տուեր է առ Ե-
ղեւսեան Սրբազանն , որ շուտով Պօլիս վե-
րադառնայ , իւր ընելու տնօրէնութիւննե-
րը ետ ձգեց :

Եղեւսեան Սրբազան Պօլիս գալէն ե-
տև վարչութիւնը երկու կողմէն գրուած
գրերը ուշի ուշով կարդալով և Եղեւսեան
Սրբազանի բերանացի բայատրութիւննե-
րը մտիկ ընելով , իր բոլոր ուշադրութիւ-
նը այս խնդրոյն վրայ դարձուց , շատ ան-
գամ բանակցեցաւ Բ , Իրան հետ , բայց
տեսնելով որ Եղեւսեան Սրբազանի հակա-
ռակ կուսակցութիւնը խնդրոյն ծանր
կերպարանք տալով յիշեալ Սրբազանի
անձնականին վերածեր է , պարտաւորե-
ցաւ թաղրի գրելով խնդրել Բ , Գունէն
որ նորա դատախազները Պօլիս բերուին
ըստ օրինի դատուելու :

Բ . Գուռը այս խնդրոյն մէջ դատա-
խաղ չճանչելով և Եղեւսեան Սրբազանի
Զմիւռնիոյ մէջ մէկ քանի արարքը ուղ-
ղակի տեղական կառավարութեան գէմ

հակառակութիւն համարելով , հարկ չը
տեսաւ նոյն Թաղրիքը գործադրել :

Խառն ժողովս չկրնալով գոհ ըլլալ
այս որոշումէն իր Թաղրիքը և բանակ-
ցութիւնը շարունակեց , սակայն Բ . Գու-
ռը իր վերջնական պատասխանը հաղոր-
դելով ժողովոյս կը յանձնարարէր այս
խնդրոյն վերջ տալ , և Զմիւռնիոյ մէջ
ճաղած խռովութիւնը հանդարտեցնելու
համար Եղեւսեան Սրբազանի տեղ ուրիշ
մը ղրկել հոն :

Այս և Զմիւռնիոյ նոր կուսակալին
կողմէ այս մասին տրուած և կրկնուած
մերժողական պատասխաններուն վրայ
Խառն ժողովս բաւական նիւտեր գոհելէն
վերջը որոշեց որ ժամանակ մը կախ մնայ
այս խնդիրը մինչև իր օրինաւոր լուծումը ,
և իր այս որոշումը ծանոյց Զմիւռնիայէն
եկած պատգամաւորներուն , միանգա-
մայն և տեղւոյն Քաղաքական ժողո-
վին ալ քաջալերական գիր մ' ուղղելով
հաղորդեց իր որոշումը և գրեց ալ որ
իւր պաշտօնը աղգասիրութեամբ շարու-
նակէ մինչև ցնոր տնօրէնութիւն : Ժողո-
վոս գրեց նաև թէ՛ կուսակալին և թէ՛
տեղւոյն նախկին աւաղերէց Տէր Գեորգ
քահանային որ նախորդ կուսակալին հրա-
մանաւր տեղւոյն Քաղաքական ժողովոյն
վրայ աւելցած երեք անգամները պաշ-
տօնէ դադրին : Խնդրոյն այս մասը ան-
միջապէս գործադրուեցաւ :

Թ .

ԹԵՔԻՐՏԱՂԻ ԱՌՋՆՈՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Թեքիրտաղի Ս . Թաղաւոր Եկեղեց-
ւոյ Թաղական խորհրդոյ ընտրութեան
առթիւ պատահած ծանր խռովութեան

վրայօք առաջնորդէն և տեղական ժողով-
ներէն եկած գրերէն հասկցուած է որ՝
խառն մը աղգայինք առաջնորդին և ընտ-
րողական ժողովոյ անդամաց դէմ բըռ-
նութիւններ և նախատինքներ ըրած են ,
և որոց համար անաչառ քննութիւն և
հատուցում կը պահանջուին : Հակառակ
կողմն ալ բողոքադրով մը տեղւոյն առաջ-
նորդ Սրժ . Եզնիկ վարդապետը կամբաս-
տանէր և պատճառ կը համարէր զնա
քուէարկութեան օրը պատահած գժտու-
թեանց , աւարկելով թէ նոյն իսկ քուէ-
արկութեան օրը ընտրական նոր տնօրէ-
նութիւններ ընելով հակառակ Սահմանա-
դրութեան ուղեր է գործադրել , որոյ
համար եղած է վէճը և այն :

Խառն ժողովս տեսնելով որ արդէն
Սրժ . Եզնիկ վարդապետ Պօլիս եկած է ,
երկու քննիչ որոշեց , որ Թեքիրտաղ եր-
թալով խաղաղութիւնը վերահաստատեն
և եղած խռովութեան պատճառները քըն-
նելով տեղեկագրեն վարչութեան ի աը-
նօրէնութիւն :

Ծ .

ԿՈՒՏԻՆԱՅԻ ԱՌՋՆՈՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Կուտինայի մէջ սահմանադրապէս
հաստատուած ժողովներուն դէմ եկած
բողոքանաց վրայ նորոգ դաւառական ժո-
ղով կազմելու պաշտօնով առկէց առաջ իր-
րև տեսուչ ղրկուած Այվատեան Մեսրովպ
էֆէնտի պաշտօնին գէմ դարձեալ բողոք-
ներ հասնելով , Խառն ժողովս չորս ան-
գամներէ բաղկացեալ յանձնաժողովոյ մը
յանձնեց այս խնդրոյն վերջնական քըն-
նութիւնը , և անոնց տեղեկագրին վրայ
նախորդ Խառն ժողովոյ ընտրութիւնը
վերահաստատեց և գրեց ի կուտինա Այ-

վատեան Մեհարովդ էֆ. ին որ իր պաշտօնը
դադրած է, և միանգամայն կրօնական
ժողովոյն յանձնեց որ առաջնորդական
ընտրելեաց ցանկը պատրաստէ ի կուսինա
յղերու համար:



ԱՄՍՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐՐ

Ամասիոյ կրօնական և քաղաքական
ժողովներէն եկած գրութիւնները վիճա-
կին առաջնորդական խնդրոյն կարգադ-
րութիւնը կը խնդրէին: Խառն ժողովն
այդ գրերը նկատողութեան առնելով
որոշեց գրել որ տեղւոյն Գաւառական
ժողովը զուգարեւոր առաջնորդական խըն-
դրոյն վրայ իր կարծիքն ու գիտողու-
թիւնը տեղեկագրէ առ Վարչութիւնն:

Գաւառական ժողովը տեղեկագրով
մը Եղեւսեան Սրբազանէն գոհունակու-
թիւն յայտնելով անոր վերադարձը կը
խնդրէր, ըստ այնմ Խառն ժողովն որո-
շեց Եղեւսեան Սրբազանին համար Թագ-
բեր գրել և անոր առաջնորդական պաշ-
տօնին վերահաստատութեան հրամանա-
գրերն առնելով Ամասիա գրիկէ: Այս
հրամանագիրն ստանալով Եղեւսեան Սրբ-
բազան Ամասիա գնաց:



ԱՆՍՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՊՐԱՅՈՒՆ ԻՆՏԵՐՐ

Այնտեղեան Գրիգորիս վարդապետ
Ղուզուլջանի մէջ մեր ազգայնոց մեծ մեծ
հարստահարութիւններ ընող Շահ Հիւսէյնի
նկատմամբ հրատարակած շատագովական
նամակին առթիւ նախորդ վարչութեան
որոշմամբ առաջնորդութեան զադրած էր:
Այս անգամ իր բրած սխալմունքը գր-
բաւոր կերպով խոստովանելով ներումն

կը խնդրէր, նմանապէս Պօլիս գտնուող
Շահնկայիք ալ ընդհանրապէս անոր վե-
րադարձը կը խնդրէին: Խառն ժողովն
յատուկ յանձնաժողովի մը յանձնելով
քննել որոշեց նախորդ վճռոյն պաշտադ-
անքը և իրոյ ներկայ վիճակը:

Այն յանձնաժողովոյ տեղեկագրին
մէջ առաջարկուածին համեմատ Գրիգորիս
վարդապետէն ստորագրեալ յետս կոչման
թուղթը՝ որոյ պատճէնն է հետեւեալը

Ամենապատիւ Սրբազան Հայր

Անցեալ տարւոյ յունվար 23 թուա-
կանու Մատիս լրագրոյ միջոցաւ ի նը-
պատս Ղուզուլջանի զայնադամ Հիւսէյնի
Պէյի հրատարակած նամակիս պարունա-
կութիւնն առանց ուշադրութեան և օրի-
նասր քննութեան գրած ըլլալուս, սր-
գարութեան պարտք մը կատարած ըլլա-
լու համար, նոյնը իբրև պարզ սխալմունք
մը յայտարարել կը փութամ:

1876 ապրիլ 24 Մ'նամ
Կ. Պօլիս Ձեր Սրբազնութեան
Խ. Ե.
Գրիգորիս վրդ. Ա. Ե. Բ. Ե. Ե.

Խառն ժողովն հրատարակել սրոշեց
և նաև ընդունեց որ իր պաշտօնին վե-
րադառնայ, սա պայմանաւ որ ըստ նա-
խորդ սրոշման Շահ Հիւսէյնի կատա-
ժարութեան տակ գտնուած Ղուզուլջանի
հետեւեալ հինգ դիզերուն համար բնա-
առաջնորդական պաշտօն չունենայ, որք
են:

- 1. Ալիսան Հիւսէյնի
 - 2. Հանգիսի օրան
 - 3. Տիւրք
 - 4. Ամատիւ
 - 5. Չօնի
- և որոշեց որ այս դիզերն զատուելով

Երգնկայի Առաջնորդութեան, մտակայ
Գերձանի կամ Գրիի վիճակին հետ միա-
նան:



ԱՄՍՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏՆՂԱՊՅԱԷ
ԱՐԺ . ՍԱՐԳԻՍ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԻՆՏԵՐՐ

Արժ. Սարգիս վարդապետ երկրա-
դործ ժողովրդեան իրաւունքը պէ. և
բուն գէժ պաշտպանելուն համար, մահ-
մետական կրօնից գէժ խօսած է ըսելով
պէյերն զինքն ամբաստաներ են և Խար-
բերդու կառավարիչն ալ զնա Խարբերդ-
բերել տալով առանց քննութեան և դա-
տաստանի բանտարկած էր:

Սրբազան նախագահը այս լուրը հե-
ռագրաւ խնայած և անմիջապէս Թագրիբ
գրելով բողոքած էր, և Փոխսնորդ Հայ-
բըն ալ անձամբ Պէյիկի Տիւրքիսիին զըր-
կած էր, սակայն Ք. Գուռը մինչև ցարդ
այս մասին անօրէնութիւն մ'ըրած չըլ-
լալուն համար Խառն ժողովն որոշեց որ
Ս. նախագահը Ատենապետ պէյին հետ
անձամբ մեծ Եպարքոսին երթան և յիշ-
եալ վարդապետը հոս բերել տալու հա-
մար հեռագիր զարնուիլը խնդրեն: Ըստ
խնդրանաց հեռագիր զարնուեցաւ և Պօ-
լիս եկաւ Արժ. Սարգիս վարդապետ:



ԱՄՍՈՒՅՑ ԿԱՐՈՒՂԵԿՈՍԻՆ ԻՆՏԵՐՐ

Ատորոց կաթողիկոս ընտրեալ Պետ-
րոս Եպիսկոպոսը, ինչպէս նախորդ Խառն
ժողովոյ համարատուութեանէ կերևի, քա-
ղաքականապէս Պատրիարքարանէն ընդ-
վզել կուզէր, և չկրնալով իւր այս դի-

տաւորութեան մէջ յաջողիլ, այս անգամ
երկու վարդապետաց հետ ժողովոյս ներ-
կայանալով խնդրեց որ, իր ընտրութեան
վաւերացման համար Ք. Գուռը Թագրիբ
գրուի, սակայն ժողովն սակէ առաջ Ք.
Գրան հետ առանձին յարաբերութիւն
հաստատելու համար ըրած աշխատութիւնը
գիտնալով հարցուց թէ ի՞նչ շարժառիթ
կար այդ բանին: Տրուած պատասխան-
ներուն մէջ թէ և օրինաւոր պատճառ մը
չ'տեսաւ, այլ սակայն նկատելով որ իւր
վաւերացման հրովարտակն առնուելու
համար խնդիր կրնէ, ուստի պահանջեց
որ գրով ընէ իւր խնդիրը, որպէս զի
հարկ եղածը անօրինուի, և երբ խնդրա-
գիրը մատուց, իր Պատրիարքութեան վա-
ւերագրոյն և միանգամայն Ա. կարգի ԲՏ-
Կի նշանի մը համար հարկ եղած Թագ-
րիկները ժողովս գրեց, որով թէ՛ Պատ-
րիարքական հրովարտակը և թէ՛ ԲՏԿի
նշանը առնուեցաւ և դիւանապետ Փափազ-
կան Թովմաս էֆէնտիի ձեռքը յանձնը-
ուեցան իրեն:

Ահաւասիկ առ Ազգ. Վարչութիւնն
մատուցած խնդրագրոյն պատճէնը:

Իրանի միւլթի Պարթիգ Գայիմագամլարլեաս

Բութպէթլու ըուհանի պիրատերի
աղիլիմ էֆէնտիմ հաղրէթլիքի

Մալիմի Ալիլիքի պույրուլտըը իւզ-
րէ Սիւրեանիի գատիմ միլլէթի պաթրե-
գի պուլունան Եագուպ էֆէնտիին վե-
ֆաթը վուգու պուլմասընտան, միլլէթի
մէրզումէնին իթթիֆագը արասը իլէ
տայիլիքի պաթրիգիլիլի մէրքիլրէ ինթի-
խապ օլլնմուշ, վէ ինթիխապը մէրքիլր
մահգէրլիքի Պաթրիկիանէի վալեալերլնէ
թէսլիմ գըլընմըշ օլմալլէ, լութիքէն եմ
3

առ վէ ուսուչի արթիզէ վէճն իլէ Պաթ-
րիգիսանէի վալեալէրինտէն Պապը Ալիէ
իճապ խտէն թագրիլին թագաթիմի իլէ
Պաթրիգիլիք Ֆէրմանը ալիշանըն վէ պի-
րինճի բութպէտէն պիր գըթա մէճիտի
նըշանը զիշանըն պիր ան ագտէմ իսթիհ-
սալի վէ եէտի աճիզանէմէ իթա օլուն-
մասը խուսուսընա հիմէմի ալիլէլէրի տէր-
քեար պուրուլմագ պապընտա էմրու իրա-
տէ պիրատէրիմ հաղըթէթլէրինն տիր

1874 քեանուէնի Կիւի

սանի և Սորբիթի-Են

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՍՈՐԻՈՑ

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ

Թագաթիմի-Են

Ար Պատրիարքական Տնտեսաբանութիւնն Հայոց

Ամենապատիւ Տէր և Սիրելի եղ-
բայր իմ 'ի Քրիստոս

ինչպէս գիտէ ձեր Սրբազնութիւնը
որ Ասորուոց ազգին Պատրիարքն եղող
Տէր Յակոբ սրբազանը վախճանելով, նոյն
ազգին միաձայն կամօքը աղօթողս Ասորուոց
Պատրիարք ընտրուած եմ, և ընտրու-
թեան տեղեկագրերը մատուցուած են
Պատուարժան Պատրիարքարանիդ:

Ուստի կը խնդրեմ որ ըստ հին սո-
վորութեան հարկ եղած թագրիլը մա-
տուցանելով Բ. Դրան, Պատրիարքական
հրովարտակը և առաջին կարգի մէճի-
տիլէ պատուանշանը ժամ յառաջ ստա-
նալու և ինձ յանձնելու շնորհ ընէք:

ՅԵ.

ՎԱՆԱՑ ՄԵԼԻՔԵԱՆ ԱՐԺ. ՊՕՂՈՍ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՆԳԻՐԸ

Արժ. Պօղոս վարդապետ առանց

վրան յայտնի յանցանք մը վերագրուելու՝
'ի Պայտղիտ աքսորուած ըլլալը յայտնե-
լով հետ զհետէ իր արձակուրդը կը խնդ-
րէր գրութեամբ:

Նոյնպէս վանեցուց կողմէն ալ ան-
ձամբ և գրով խնդիր մատուցուելով յիշ-
եալը իր աքսորանքէն ազատել կը պա-
հանջուէր:

Ժողովս տեսնելով որ յիշեալը յի-
րաւի առանց դատաստանի աքսորուած
էր, արժան դատեց աքսորանքէն դառ-
նալու համար թագրիլը գրել Բ. Դուռը,
և որոշեց որ վսնայ ազգային գործոց
չմիջամտէ, այլ Լիմ անապատը նստի
մինչև ցվերջ քննութեան և դատաստանի:
Ըստ այսմ Պօղոս վարդապետ գնաց
'ի վան:

Մաս մը վանեցի ազգայինք լսելով
որ Պօղոս վարդապետ աքսորանքէն կա-
զատի, վանայ սահմանները չմտնելու
համար բողոք մատուցին, սակայն ժողո-
վը իր որոշումը փոխելու համար զօրաւոր
պատճառ մը չ'տեսաւ:

Ամբաստանողք պարտաւատերով մը
ներկայացած և ստորագրելով նոյն տես-
րակը Պօղոս վարդապետին Պօլիս գալը
պնդեցին իրենց հետ դատուելու համար:
Ժողովոյս պահանջմանը համեմատ օրի-
նաւոր և թիւս-բիւն վաւերացեալ երաշխա-
ւոր ցըցուցին դատը կորսնցուցած ա-
տենին ամբաստանեալին ամէն վնասները
հատուցանելու և օրինաց տրամադրած
պատիժը կրելու համար:

Ժողովս նկատելով որ այս պահանջ-
ման օրինական պայմանները գոհացուցիչ
էին և մէկ կողմէ ալ Պօղոս վարդապետ
իւր հակառակորդաց հետ դատ վարելու
համար Պօլիս գալը կը թախանձէր, հե-

աագրեց և նամակներ ալ գրեց որ ան-
միջապէս գայ 'ի Պօլիս:

ՅԶ.

ՀՅՆՈՒՅՆԵՍԼ ՌՁՏՈՒՆԻ ԳԵՐ . ՅՈՎՀԱՆՆԵՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՈՅԻՑ ԽՆԳԻՐԸ

Կարսի առաջնորդական տեղապահ
Սափրիչեան Արժ. Տիմոթէոս վարդապե-
տը նամակաւ կը յայտնէր թէ անցեալ
տարի հոն վախճանեալ Գեր. Ռշտունի
Յովհաննէս եպիսկոպոսի թողած առնե-
լիքներէն և50 լիրա ստացեր էր տեղոյն
Քաղաքական ժողովը Բաղիչեցի Հիւրմիւզ-
եան Ղարիպճան աղայէն, որոյ տոկոսն
առ այժմ տեղոյն ազգային վարժարա-
նաց յատկացնելով մտադիր է մնացեալ
առնելիքներն ալ ձեռք բերուելէ ետև
անշարժ կալուածներ գնել գիշերթիկ
վարժարանի մը համար, զոր շինել կը
խորհին իօշայ վանքին մէջ, և այս մասին
վարչութեան հաւանութիւնը կը խնդրեն:

Ժողովս յարմար դատեց սր նոյն
գանձեալ գումարը հոս զրկեն առ այժմ
Կեդրոնական վարչութեան հսկողութեան
տակ մնալու համար, մինչև որ Ռշտունի
Սրբազանին թողած առնելիքներուն գու-
մարըն ամբողջ գանձուին և պէտք եղած
անօրէնութիւնն ըլլայ այս մասին:

Ժողովին այս որոշման վրայ գրուած
նամակն անպատասխանի մնացած է մին-
չև 28 յունիս 1874:

ՅԳ.

ՅՕՕ ՈՍԿԻՈՑ ԽՆԳԻՐԸ

Մինչդեռ խառն ժողովը որոշած էր
հանգուցեալ տեղապահ Աղասեան Տ.
Նիկողայոս Սրբազանին պաշտօնավարու-

թենէն վարչութեանս ունեցած գոհու-
նակութիւնը պաշտօնապէս հրատարակել,
ահա յանկարծ լուր մը ելաւ Պատրիար-
քարանի մէջ թէ Աղթամարայ Խաչատուր
կաթողիկոսը հանգուցեալէն 500 ոսկի կը
պահանջէ առանց մուրհակի, և կը խնդ-
րէ որ հանգուցելոյն ստացուածքէն նոյն
գումարն իրեն վճարուի: Որկէ ոմանք
կասկած յարուցին թէ մի գուցէ կաշա-
ռատուութիւն ըլլայ այս գումարը, որով
խառն մասնաժողովոյ և ետքը յատուկ
յանձնաժողովոյ մը քննութեանը յանձնը-
ուեցաւ այս խնդիրը:

ՅԷ.

ՄՁՈՑ ԵՒ ՎԱՐՈՎԱՑ ՎԱՆՈՒՑ
ՎԱՆԱՅԱՅՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԳԻՐԸ

Մշոյ և վարագայ վանուց վանա-
հայրութեան բաժանման առաջարկու-
թիւնը, որ վանօրէից Խորհրդէն եկած
էր, իբրև ընդհանուր սկզբունք ընդու-
նեց խառն ժողովս, և որոշեց նաև հա-
ղորդել Գեր. Խրիմեան Մկրտիչ Սրբա-
զանին թէ ինքը վարագայ վանուց բնիկ
միաբանն ըլլալով Նորա վանահայրութիւ-
նը միայն պիտի շարունակէ, իսկ Մշոյ
համար վարչութիւնը ուրիշ վանահայր
պիտի զրկէ:

Մշոյ Ս. Կարապետի վանուց միաբա-
նութիւնը Գեր, Մամբրէ եպիսկոպոսը
վանահայր ընտրած ըլլալով, ժողովս նա-
խապէս իրմէ խոստումն առաւ թէ վա-
նօրէից սահմանադրական Հրահանգին հա-
մեմատ պիտի կարգադրէ վանքը, և թէ
վանուց հասոյթն ու ծախքը իմաստու-
թեամբ պիտի տնօրինէ և տարուէ տարի
հաշիւը Կեդրոնական վարչութեան պիտի

ղրկէ, և ապա սոյն ընտրութիւնն ընդունելով վաւերացուց:

Գեր. Խրիմեան Սրբազան այս որոշման դէմ բողոքեց, սակայն Խառն Ժողովս Նորին Սրբազնութեան բողոքին պատշաճ պատասխանը տալով իր որոշումը վերահաստատեց:



ՊԵՏԻԿՐԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ԽՆԴԻՐԸ

Պաշտօնական կերպով Ազգային վարչութեան հաղորդուած էր որ Պէշիկթաշի գերեզմանատունը Երբայրի Բէօշիկին շատ մօտ ըլլալով նորին Կայսերական վեհափառութեան բարձանքն է որ գերեզմանատան ախար կերպարանքը պարտէզի կամ անտառի ձևի փոխարկուի, առանց ննջեցելոց ոսկրներուն դպելու, նոյն աւերը դարձեալ ազգին սեպհականութիւնը մնալով, միայն տապանաքարերը հողով ծածկուի պատերը խցնցելով, երկաթէ վանդակ քաշուի և խիտ խիտ ծառերով զարդարուի: Խառն Ժողովս նկատելով որ արդէն ննջեցեալ թաղելի դագրած է նոյն գերեզմանատունը, ի նշան երախտագիտութեան առ Նորին Կայսերական վեհափառութիւնն սիրով հնազանդեցաւ այս հրամանին և իր կողմէն Նախագահ Սրբազանն և Բաղաքական Ժողովոյ Ատենապետ պէյը պատգամաւոր կարգեց, որ պէտք եղած տեղերը բանակցելով, Պէշիկթաշի Թաղ. Խորհրդոյն հետ հարկ եղածը դործադրէ և Նորին Կայսերական վեհափառութեան առաջարկութիւնն ի դրլուի հանէ, եղած բանակցութեանց արդիւնքը միշտ Ժողովին հաղորդելով և վաւերացնել տալով:

Ժողովիս այս որոշումը Նախագահ Սրբազան և Ատենապետ պէյ Մեծ եպարքոսին հաղորդելով, որ շնորհակալութիւն յայտներ է Ազգին, և պէտք եղած բանակցութիւնն ընելով Բաղաքապետին հետ Պէշիկթաշի գերեզմանատունը դացեր են, ուր ներկայ գանուած է նաև Պէշիկթաշի Թաղական Խորհուրդը:

Ատենապետ պէյ Ժողովոյս որոշմանը համեմատ գերեզմանատան վրայ ըլլալը փոփոխութիւնը Պէշիկթաշի Թաղ. Խորհրդոյն յանձնեց է ի դործադրութիւն: Բաղաքապետը ծախքը կառավարութեան կողմէն հագացուիլն առաջարկել է, բայց Պէշիկթաշի Թաղ. Խորհուրդը յայտնած է որ նոյն ծախքը աղղային հանգանակութեամբ պիտի ըլլայ:

Ատենապետ պէյը նաև Ժողովիս յայտարարեց որ վսեմաշուք Երամեան Ագրահամ Պէյը 1500 ոսկի նուիրեց ազգիս, որով թէ՛ Պատրիարքի ընտրութեան վաւերացման ծախքը, թէ՛ Պատրիարքանի կարասեաց նորոգութեան և թէ՛ այս գերեզմանատան փոխաձևութեան ծախքը պիտի հոգացուի:

Խառն Ժողովս շնորհակալութեան դիր գրեց առ վսեմաշուք Երամեան Ագրահամ Պէյ, և նաև Պէշիկթաշի Թաղական Խորհրդոյն ծանոյց որ գերեզմանատան ծախքը վարչութիւնը պիտի վճարէ:



ԿՈՒՏԻՆԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԳԵՐ. ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ
ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
Հեռագրով իմացուեցաւ թէ ժառանգորդք հանգուցելոյն կտակը չի յարգե-

լով ժառանգութիւնը Պրուսա փոխադրել կուզեն: Խառն Ժողովը Պրուսայի առաջ նորդ Գեր. Բարթոլոմէոս Սրբազանին յանձնեց այս խնդիրը, որպէս զի թէ՛ կըտակը դործադրել տայ և թէ՛ հանգուցելոյն կեդրոնական անտուկին ունեցած մուգաթայի վերաբերեալ 8750 դշի պարտքը վճարել տալու փոյթ տանի:

Հանգուցեալ Յովսէփ Եպիսկոպոսի գոյից, Բերեւէյ և կտակագրին ցուցակը Պրուսայի առաջնորդին միջոցաւ եկած ըլլալով, Խառն Ժողովս որոշեց Ս. Թորոս Եկեղեցւոյ կտակեալ դումարին և նոյնպէս կեդրոնական անտուկի պահանջին դործադրութեան հսկողութիւնը յանձնել Պիլէճիկի Գահանայից և Թաղական Խորհրդոյն:



Պ Ա Տ Կ Ե Ր
ԸՆԹԱՅԻՑ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

Խառն Ժողովոյ այս համարատուութիւնը՝ որ 1873 նոյեմբեր 27էն սկսեալ մինչև 1874 յունիս 28 կը տևէ, եօթը ամսուան միջոցի մէջ կատարուած դործողութեանց ամփոփումն է: Խառն Ժողովս եօթն ամսուան միջոցի մէջ ընդ ամենը 14 նիստ ըրած է երկու շաբաթը մէկ անգամ նիստ ընելով, և այս համարատուութեան մէջ նշանակեալներէն դուրս շատ դործեր տեսած է, և ուրիշ շատ մը խնդիրներ ալ Խառն մասնաժողովով լուծուած և Խառն Ժողովոյ մէջ վաւերացած են: Այս ամեն խնդրոց վրայ համառօտ գաղափար մը տուած ըլլալու համար պատշաճ կը համարինք իւրաքանչիւր նիստերու խնդրոց կարգը հոս դնել ներկայութեանց թիւերովն հանդերձ:

- Ա. ՆԻՍՏ 27 ՆՈՅԵՄ 1873
Կրօնական Ժողով 9. Քաղաքական Ժողով 10.
ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ
Ընտրութիւն Տեղապահի
- Բ. ՆԻՍՏ 7 ԴԵԿՏՄ. 1873
- Ս. Տեղապահ. Կրօն. Ժողով 7. Քաղ. Ժողով 9
ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ
- 1. Վաւերացումն նախորդ նստի աւտենագրութեան:
- 2. Վաւերագիր Բ. Դունէն վասն ընտրութեան տեղապահ Սրբազանի:
- 3. Զմիւռնիոյ առաջնորդական խնդիրը:
- 4. Երուսաղիմայ Ս. Տեղեաց խնդիրը:
- 5. Ներսէս Սրբազանի հրաժարականը Նիկոմիդիոյ առաջնորդութենէն:
- 6. Ռատոսթոյի առաջնորդական խնդիրը:
- 7. Կուտինայի առաջնորդական խնդիրը:
- Գ. ՆԻՍՏ 21 ԴԵԿՏՄ 1873
- Ս. Տեղապահ. Կրօն. Ժող. 6 Քաղ. Ժող. 10
ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ
- 1. Վաւերացումն նախորդ նստի աւտենագրութեան:
- 2. Ատորոց խնդիրը:
- 3. Երուսաղիմայ »
- 4. Զմիւռնիոյ »
- 5. Վանայ Պօղոս վրդպին խնդիրը:
- Դ. ՆԻՍՏ 28 ԴԵԿՏՄ. 1873
- Ս. Տեղապահ. Կրօն. Ժողով 6. Քաղ. Ժողով 9
ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ
- 1. Զմիւռնիոյ խնդիրը:

- 2. Թէքիրտաղի խնդիրը
- 3. Թափուր մնացեալ առաջնորդական վիճակաց խնդիրը :

Կ. Վանեցւոց բողոքը Պօղոս վարդապետին վան երթալուն դէմ :

Ե. ՆԻՍՏ 16 ՅՆՎՐ. 1874

Ս. Տեղաւոր. Կրճ. Ժ. 6 Բ. Ժ. 6 Ժ. 5.
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Վաւերացումն նախորդ երկու նիստերու ատենագրութեանց :
- 2. Թափուր մնացեալ առաջնորդական վիճակները :
- 3. Կիլիկիոյ վիճակաց խնդիրը :
- 4. Չ. Թ. Ի ամուսնական »
- 5. Թէքիրտաղի խնդիրը :
- 6. Ռչտունի Յովհաննէս եպիսկոպոսի դոյնից խնդիրը :

Զ. ՆԻՍՏ 15 ՓՏՐՎ 1874

Տեղաւոր վարձանէալ. Կրճ. Ժ. 9 Բ. Ժ. 9
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Ընտրութիւն Պատրիարքական նոր տեղապահի :
- 2. Կուտինայի խնդիրը :
- 3. Թէքիրտաղի »
- 4. Զմիւռնիոյ »
- 5. Ամասիոյ Առաջնորդական խնդիրը

Է. ՆԻՍՏ 1 ՄԱՐՏ 1874

Տեղաւոր Ներէն Սբաշան, Կրճ. Ժ. 8 Բ. Ժ. 7
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Վաւերացումն նախընթաց երկու նիստերու ատենագրութեանց.
- 2. Հանդուցեալ Տեղապահ Նիկողոս Սրբազանին ժառանգութեան խնդիրը :
- 3. Վաւերացի Բ. Գրան վանն հաստատութեան Տեղապահ Սրբազանի :

- 4. Զմիւռնիոյ խնդիրը .
- 5. Ալեաթճեան Գրիգորիս վարդապետին խնդիրը .

- 6. Երուսաղիմայ խնդիրը .
- 7. Չ. Թ. Ի ամուսնական խնդիրը .
- 8. Թ. Կ. Ի » »
- 9. Պ. Խ. Ի » »
- 10. Լ. Գ. Ի » »
- 11. Շ. Գ. Ի » »
- 12. Ս. Գ. Ի » »
- 13. Մ. Մ. Ի » »

- 14. Վանայ Պօղոս վարդապետի դէմ բողոք :
- 15. Խառն մասնաժողով խառն խընդրոց համար :

16. Իզմիրլեան Մատթէոս վարդապետի բողոքը Մեղուի խմբագրին դէմ .

Ը. ՆԻՍՏ 15 ՄԱՐՏ 1874

Տեղաւոր Ներէն Սբաշան (Բացաւոյ) Կրճ. Ժ. 8, Բ. Ժ. 6.
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Պատրիարքական ընտրութեան խնդիրը .
- 2. Զմիւռնիոյ խնդիրը .
- 3. Հանդուցեալ Յովսէփ եպիսկոպոսի ժառանգութեան խնդիրը .
- 4. Պալքէսէրի առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը .
- 5. Դատաստանական խորհրդոյ և Օ. էֆ. Ի մէջ ծագած դատը .
- 6. Պօղոս վարդապետի դէմ բողոքող վանեցիք .
- 7. Շահպաղեան Տէր Յ. Ի բողոքը Օ. էֆ. Ի դէմ .
- 8. Հանդուցեալ տեղապահ Նիկողայոս եպիսկոպոսի ժառանգութեան խընդիրը :

Թ. ՆԻՍՏ 17 ԱՊՐԻԼ 1874

Տեղաւոր Ներէն Սբաշան Կրճ. Ժ. 5 Բ. Ժ. 6
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Վաւերացումն նախորդ երկու նիստերու ատենագրութեանց .
- 2. Ազգային վարչութիւնէն երկու նամակ առ Ընդհանուր ժողովք .
- 3. Պէշիկթաշի ազգային դերեզմանատան խնդիրը .
- 4. Խառն մասնաժողովոյ տեղեկագիրը, 18 խնդիր .
- 5. Սահմանագրութեան գործադիր յանձնաժողով .
- 6. Ամասիոյ առաջնորդական խնդիր .
- 7. Պ. Խ. Ի ամուսնական խնդիրը
- 8. Չ. Թ. Ի » »
- 9. Հմայեակ վարդապետի առաջարկութիւնը Լոյս անունով պարբերական թերթի մը հրատարակման համար .
- 10. Խրիմեան սրբազանին Մշոյ վահայրութեան հաշիւներուն խնդիրը .
- 11. Վանօրէից խորհրդոյ յայտագիրը :
- 12. Ալեաթճեան Գրիգորիս վարդապետին խնդիրը :

Ժ. ՆԻՍՏ 24 ԱՊՐԻԼ 1874
Տեղաւոր Ներէն Սբաշան Կրճ. Ժ. 8, Բ. Ժ. 7
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Ակնայ առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը :
- 2. Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսի խնդիրը :
- 3. Զմիւռնիոյ խնդիրը .
- 4. Մշոյ Ս. Կարապետի վանահայրութեան խնդիրը .
- 5. Դատաստ, խորհրդոյ և Օ. էֆ. Ի դատին շարունակութիւնը .

6. Պէշիկթաշի Ազգ. դերեզմանատան խնդիրը .

- 7. Վարչական տնօրէնութեանց հրատարակման խնդիրը .
- 8. Կիլիկիոյ Կաթողիկոսին սահմանադրական յարաբերութեանց ծրագիրը .
- 9. Ալեաթճեան Գրիգորիս վարդապետի խնդիրը .
- 10. Պ. Խ. Ի ամուսնական դատը .
- 11. Պրուսայի Ս. առաջնորդին նամակը .

12. Իզմիրլեան Մատթէոս վարդապետին եպիսկոպոսական վկայագիրը :
ԺԱ. ՆԻՍՏ 15 ՄԱՐՏ 1874
Սբաշան Պարտիւր Ներէն Արեւիկոյոս Կրճ. Ժ. 8 Բ. Ժ. 6
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Զմիւռնիոյ խնդիրը .
- 2. Խառն մասնաժողովոյ տեղեկագիրը 13 խնդրոց համար .
- 3. Երզնկացւոց ոմանց բողոքը Գրիգորիս վարդապետի վերահաստատութեանը դէմ :
- 4. Չ. Թ. Ի ամուսնական խնդիրը .
- 5. Ս. Չ. Ի » »
- 6. Շ. Գ. Ի » »

ԺԲ. ՆԻՍՏ 31 ՄԱՐՏ 1874
Ս. Պարտիւր Կրճ. Ժ. 5 Բ. Ժ. 6.
ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Պատրիարքական շնորհաւորի այցելութեանց խնդիրը .
- 2. Կրօնական ժողովոյ ընտրութեան համար Ընդհանուր ժողով .
- 3. Խառն ժողովոյ կողմէ երկու նամակ առ Վեհ. Կաթողիկոսն .
- 4. Շրջաբերական Ս. Պատրիարքի առ կուսակալս դաւառաց .

5. Խառն մասնաժողովոյ տեղեկագիրը 11 խնդրոց համար .

6. Ասորի Տէր Դաւիթ քահանային խնդիրը .

7. Ամբրոսիոս վարդապետի խնդիրը .

8. Պէլէնցի աէր Յակոբ քահանային խնդիրը .

9. Սահմ. գործադիր յանձնաժողովոյ տեղեկագիրը՝ Վանայ սահմանադրական ընտրութեանց մասին .

10. Նիկոմիդիոյ վիճակին առաջնորդական խնդիրը .

ԺԳ. ՆԻՍՏ 14 ՅՈՒՆԻՍ 1874 .

Սբաւոյն Պարբերք

Կրճ. ժողով 7. Գաղ. ժողով 8

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՑ

1. Տիվրիկի առաջնորդական խնդիրը

2. Հանգուցեալ Փորթուղալեան Մըկրաչի Ակիւլինէ տիկնոջ կտակագիրը .

3. Կտակաց հոգաբարձութեան վերակազմութիւն .

4. Խրիմեան սրբազանի բողոքագիրը .

5. Զմիւռնիոյ խնդիրը .

6. Խառն մասնաժողովոյ տեղեկագիրը 8 խնդրոց համար .

Ինչպէս կը տեսնուի Խառն ժողովն եօթն ամսուան միջոցի մէջ 14 Նիստ ընելով 111 խնդիրներով զրազած է, և բաց ասկէ Խառն Մասնաժողովն ալ 59 խնդիրներու վաւերացումն ընել տուած է :

Ստորագրեալ է 19 Սեպտեմբերի 1875

Ս.Ն.Գ.Ս.Բ. ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

- ԳԱՐՅՈՒՆ ՎԱՐԳ . ԲԱՅԱՐԵԱՆ
- ՀԱՍՏԵԱՆ ՎԱՐԳ . ԳԻՄՆԱԳՈՍԵԱՆ
- ՄԱՏԻՔՈՍ ՎԱՐԳ . ԵՊԻՏՈՒԿԵԱՆ Առնակադիր
- ԶԷՈՐԳ ՊԱՀԱՆՈՅ ԱՐՄԻՈՒՆԻ
- ԲԱԶԱՅՈՒՐ ՔԷՆ . Տ. ԳԱՐԻԿԵԱՆ
- ԲՈՐԷՆ ՊԱՀԱՆՈՅ ՓԷՆՎԱՆՆԵԱՆ
- ՍԱՐԹՈՒՆ ՔԷՆ . ՍԵՐՈՎՈՍԵԱՆ
- Պ . Փ . ՅՈՎՋ . ՔԷՆ . ՄԿՐԵԱՆ
- ՍԱՀԱՆ ԲԱՀԱՆՈՅ Տ . ՍԱՐԳՍԵԱՆ

Ս.Ն.Գ.Ս.Բ. ԳՍԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

- Ս . ՄԱԲՍՈՒՏԵԱՆ Առնակալետ
- Մ . ՄԱՄԻԿԱՆԵԱՆ Առնակադիր
- ՍՍՍՓԱ ԻԿՏՊԱՆԵԱՆ
- ԱՐԳԻՍ ԵՐԳՊԵԱՆ
- ՍՄՄՈՆ ՄԻԲԱՅԵԼԵԱՆ
- ՍՅԵՎԱՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ
- ՍՅԵՓԱՆ ԽՆԴԻՐԵԱՆ

7. Երուսաղիմայ Բէթղէհէմ եկեղեցւոյ խնդիրը .

8. Պէլէնցի աէր Յակոբ քահանային խնդիրը .

ԺԴ. ՆԻՍՏ 28 ՅՈՒՆԻՍ 1874

Սբաւոյն Պարբերք

Կրճ. ժողով 5. Գաղ. ժողով 5

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՑ

1. Վաւերացումն նախորդ 5 Նիստերու ատենագրութեանց .

2. Ռուսիոյ հայ վարժարանաց խնդիրը .

3. Բալուի Սարգիս վարդապետի բանտարկութեան խնդիրը .

4. Տիվրիկի առաջնորդական խնդիրը .

5. Տէրոյէնց պատուելիին խնդիրը .

6. Խրիմեան սրբազանին բողոքին պատասխանը .

7. Երեմիա եպիսկոպոսին առաջնորդական ընտրութիւնը .

8. Եւզոկիոյ առաջնորդական ընտրութիւնը .

9. Վանեցւոյ տմանց բողոքը :

10. Ստիա լրագրոյ հրատարակիչը .


11. Խառն մասնաժողովոյ տեղեկագիրը 9 խնդրոց համար :

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ 1873-74 ՍՄԻ

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ 1873-74 ՍՄԻ



ԳԻՆ ԵՐԵՔ ԴՈՒՐՈՒՇ



ՄԵՓՈԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴԴՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

